Արթուր Վարդանյան
ԵՄՀ կառավարման ամբիոնի չորրորդ կուրսի ուսանող

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

Փոքր և միջին ձեռնարկությունները հիմնարար դեր ունեն երկրի տնտեսության զարգացման, ինչպես նաև բազմաթիվ գործարար մշակույթների ձևավորման մեջ: Լինելով ավելի ճկուն և հարմարվող՝ նրանք շատ շուտ ընկալում և գործածում են նոր տեխնոլոգիաներ և ձևաչափեր, ինչի արդյունքում ավելի մանրամասն են տիրապետում համաշխարհային առաջընթացի միտումներին:

ՓՄՁ-ները կերտում են աշխատուժի մեծ շուկա և առաջարկում աշխատանք և կարճ ժամանակում լրացնում են բիզնեսում առկա այն բացերը, որոնք թանկ կամ այդքան էլ շահավետ չեն խոշոր կազմակերպությունների համար:

ՓՄՁ-ներին հատուկ է նաև աշխատակիցների նկատմամբ ղեկավարության ավելի ջերմ ու ընկերական վերաբերմունքը, ինչի արդյունքում ստեղծվում է շատ ավելի սերտ հարաբերություններ ղեկավարության և թիմակիցների միջև:

Հիմնաբառեր. ձեռնարկատիրական գործունեություն, փոքր և միջին ձեռնարկություններ (ՓՄՁ), չափանիշ, որակական չափանիշներ, ՓՄՁ սուբյեկտներ:

Ներածություն: Շուկայական հարաբերությունների ձևավորման և հետագա զարգացման փուլերում տնտեսության ցանկացած ոլորտում կարևորագույն դեր և նշանակություն է ձեռք բերում ձեռնարկատիրական գործունեությունը, նրա կազմակերպման ձևն ու մակարդակը: Առանց ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու ոչ մի տնտեսվարող սուբյեկտ չի կարող ապահովել իր առջև դրված գործարար նպատակների իրագործումը: Ժամանակակից տնտեսությունը պատմականորեն զարգացող սոցիալ-տնտեսական կյանքի կազմակերպման տարբեր ձևերի կատարելագործման արդյունք է, որի անբաժանելի բաղադրամասերից մեկը փոքր և միջին ձեռնարկատիրությունն (ՓՄՁ) է: Այն շուկայական տնտեսության արմատավորման և կայացման հիմնական երաշխիքն է: ՓՄՁ զարգացումը նպաստում է ներքին շուկայի ծավալների ընդլայնմանը, արտաքին շուկաներում տեղական ապրանքների և ծառայությունների մրցունակության բարձրացմանը և արտահանման ծավալների ավելացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, ինչպես նաև՝ պարապուրդի մատնված արտադրական հզորությունների արդյունավետ օգտագործմանը՝ ապահովելով երկրում քաղաքական, սոցիալական և տնտեսական կայունություն:

Յուրաքանչյուր երկրում ձեռնարկատիրությունը կայուն տնտեսական զարգացման հիմնաքարերից մեկն է: Այն երկրի տնտեսության աճն ապահովող կա-

* Ներկայացվում է 2017թ. դեկտեմբերի 15-ին Եվրասիա միջազգային համալսարանում տեղի ունեցած ուսանողական ամենամյա գիտաժողովի ընթացքում քննարկված նյութերի հիման վրա:

րևոր խթան է հանդիսանում՝ զարկ տալով գործարարությանը և ձեռներեցության ունակությունների բարձրացմանը, տնտեսական ներուժին, որն իր ճկունությամբ ու հեշտությամբ հարմարվում է շուկայի փոփոխական միջավայրին, ստեղծում նոր աշխատատեղեր և տնտեսական գործունեության հնարավորություններ՝ նպաստելով ապրանքների արտահանմանը և մրցունակության բարձրացմանը: Ձեռնարկատիրության էությունը կայանում է նաև նրանում, որ այն միմյանց է կապում տնտեսական համակարգի բոլոր օղակները, որոնց հիման վրա կարելի է կառուցել կայուն տնտեսական աճ և սոցիալական բարձր կենսամակարդակ:

Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման հեռանկարները ՀՀ-ում: Ընդհանուր առմամբ փոքր և միջին ձեռնարկատիրության առանձնացումը պայմանական բնույթ է կրում և չի ենթարկվում պարզ բնորոշման: Ցանկացած դասակարգման մեջ պետք է ի նկատի ունենալ այն պայմանը, թե ինչպես են իրականացվել ձեռնարկությունների չափորոշման գործընթացները, և ինչ ցուցանիշներ են հաշվի առնվել ձեռնարկության չափերի որոշման և հետագայում նաև նրա դասակարգման համար: Հատկանշական է, որ տարբեր երկրներում ՓՄՁ բնութագրող միևնույն ցուցանիշը ունի տարբեր չափանիշներ: Սակայն գոյություն ունեն ընդհանուր տարածում գտած մի շարք չափանիշներ, որոնցով բնութագրվում է փոքր և միջին ձեռնարկատիրությունը

Փոքր և միջին ձեռնարկությունների չափորոշման համար օգտագործվում են երեք տարբերակ: Դրանք են՝

- քանակական,
- որակական և համակցված մոտեցումները:

Փոքր և միջին ձեռնարկությունների չափորոշման ժամանակ, եթե օգտագործվում է քանակական մոտեցումը, ապա շատ հաճախ վերլուծության համար որպես հիմնական չափորոշչային ցուցանիշ, որի հիման վրա տարբեր կազմակերպաիրավական ձևի ձեռնարկությունները վերաբերում են փոքր և միջին ձեռնարկատիրությանը, հանդիսանում է հաշվետու տարում ձեռնարկություններում զբաղված աշխատողների միջին ցուցակային թվաքանակը: Որպես կանոն առավել ընդհանուր քանակական չափորոշիչներից են աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, կանոնադրական կապիտալի չափը, ակտիվների մեծությունը և շրջանառության ծավալը:

Քանակական տարբերակման հիմնական առավելությունը նրա օգտագործման հարմարավետությունն է: Այսինքն՝ այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են տարեկան շրջանառությունը կամ աշխատողների թվաքանակը, բավականին հարմար են ուսումնասիրությունների համար: Այս մոտեցման հիմնական թերությունն այն է, որ ցուցանիշները խիստ բացարձակ են, բացի այդ այս կամ այն ցուցանիշների և դրանց սահմանների չափորոշման հարցում տարբերակվածությունը դժվարացնում է դրանց օգտագործումը համեմատական վերլուծության ժամանակ:

Ձեռնարկությունները փոքրի և միջինի տարբերակման մեջ օգտագործվում է նաև որակական մոտեցումը, որը կիրառվում է որակական չափանիշների միջոցով: ՓՄՁ սուբյեկտների սահմանման որակական չափորոշիչներն առայսօր էլ օգտագործվում են միայն տեսական հետազոտություններում և որևէ երկրի կողմից օրենսդրորեն չեն ամրագրվել: Այս ձևով չափակցման գործընթացը հիմնականում հիմնված է սուբյեկտիվ կարծիքների և փորձի վրա: Որպես որակական չափորոշման տիպային օրինակ՝ Ռ. Բրուկսբենը մեջբերում է Վան Հորնի տարբերակումը,

որը նա օգտագործել է փոքր ֆիրմաների ստրատեգիական պլանավորման գործընթացում: Վան Հորնն առանձնացնում է հետևյալ բնորոշ գծերը[1].

1. Արտադրվող արտադրանքի հարաբերական փոքր քանակություն,
2. Համեմատաբար սահմանափակ ռեսուրսներ և հզորություններ,
3. Կազմակերպության ռազմավարական իրավիճակի գնահատման և վերահսկման համար անհրաժեշտ համեմատաբար թույլ զարգացած կառավարման համակարգեր, կառավարչական գործընթաց և տեխնոլոգիաներ,
4. Կառավարման անհամակարգվածություն,
5. Հիմնական կառավարչական պաշտոնների և բաժնետոմսերի մեծ մասի կենտրոնացում ձեռնարկության հիմնադիրների ձեռքում[2]:

Ելնելով այս որակական մոտեցումներից՝ Վան Հորնը առաջարկել է, օրինակ, միջին ձեռնարկության տակ դիտարկել այն կազմակերպությունները, որոնց աշխատողների թվաքանակը 50-ից 500 մարդ է, իսկ տարեկան շրջանառությունը՝ 1-33 մլնֆ.ս.[3]:

ՓՄՁ սուբյեկտների չափորոշման գործընթացը բավականին բարդ գործընթաց է, և միևնույն ձեռնարկությունը միաժամանակ կարող է համարվել և՛ խոշոր, և՛ միջին, և՛ փոքր՝ կախված կիրառվող ցուցանիշներից և դրանց սահմաններից: Նույնիսկ ճյուղային կառուցվածքի կտրվածքով մեկ ճյուղի միջին ձեռնարկությունը ուղղակիորեն երկու այլ ճյուղերում կարող է լինել խոշոր և փոքր: Եվ ինչպես նշում է Ջ. Գրեյը, փոքր ձեռնարկությունների որևէ բազմակողմանի չափորոշում չի կարող բավարար լինել բոլոր խնդիրների լուծման համար: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է հստակեցնել ՓՄՁ չափակցման ցուցանիշները և դրանց սահմանները, որպեսզի ՓՄՁ զարգացմանն ուղղված քաղաքականությունը հնարավոր լինի հասցնել նպատակային խմբին:

Գծապատկեր 1.1 Եվրամիության ընդունված ՓՄՁ չափորոշիչները[4]

Տնտեսավարող սուբյեկտներ	Աշխատողների թվաքանակ (մարդ)	Տարեկան շրջանառություն (մլն եվրո)		Ակտիվների հաշվեկշռային արժեք (մլն եվրո)
ՄԻՋԻՆ	< 250	≤ 50	կամ	≤ 43
ՓՈՔՐ	< 50	≤ 10	կամ	≤ 10
ԳԵՐՓՈՔՐ	< 10	≤ 2	կամ	≤ 2

Եվրամիության չափորոշիչների համաձայն ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են երեք խմբի՝

- գերփոքր (միկրո),

[1] Տե՛ս Համեմատաբար սահմանափակ ռեսուրսներ և հզորություններ:

[2] Տե՛ս Динкин А., Стерлин А., “Предпринимательство в конце XX века”, Институт мировой экономики и международных отношений (Российская академия наук), М, 1992г., էջ 24:

[3] Տե՛ս “Fundamentals of Financial Management”by James C. Van Horne, John M. Wachowicz, Paperback, Prentice Hall (November 2008), էջ 57:

[4] Տե՛ս Հարությունյան Դ., «Գործարարության ծավալման տնտեսական խթանները Հայաստանի Հանրապետությունում», Եր., 2007, էջ, 11:

- փոքր,
- միջին:

Դասակարգումը կատարվում է՝ հիմք ընդունելով ՓՄՁ սուբյեկտներում ներգրավված աշխատողների թվաքանակը, տարեկան շրջանառությունը կամ ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Համաձայն Եվրամիության չափորոշիչների՝ ՓՄՁ սուբյեկտներ են համարվում այն կազմակերպությունները, որոնց աշխատողների թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, տարեկան շրջանառությունը չի գերազանցում 50 մլն եվրոն կամ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 43 մլն եվրոն: Ըստ առանձին կատեգորիաների ներկայացված է գծապատկեր 1.1-ում:

Հարկ է նշել, որ Եվրամիության չափորոշիչներ կիրառող գրեթե բոլոր երկրները հնարավորություն ունեն իրականացնելու համեմատական վիճակագրական վերլուծություն, ինչը երկրի տնտեսության մեջ ՓՄՁ ոլորտի տեղի ու դերի գնահատման առումով ակնհայտորեն ստեղծում է տարբեր երկրներում ՓՄՁ ոլորտի զարգացման մակարդակի վերաբերյալ առավել հստակ պատկեր:

Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչներն ամրագրված են 2000թ.ընդունված «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով[5]՝ համաձայն որի ՓՄՁ սուբյեկտների (առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր) դասակարգումը հիմնված է միայն աշխատողների միջին ցուցակային թվաքանակի վրա՝ համաձայն ստորև բերված ոլորտային չափորոշիչների՝

Աղյուսակ 1. ՓՄՁ սուբյեկտների դասակարգումը ՀՀ-ում

Դասակարգում Ոլորտ	ՓՄՁ սուբյեկտներ		
	Գերփոքր (աշխատողների թվաքանակը/մարդ)	Փոքր (աշխատողների թվաքանակը/մարդ)	Միջին (աշխատողների թվաքանակը/մարդ)
Արդյունաբերություն և նյութական արտադրության այլ ճյուղեր	5	50	100
Շինարարություն և էներգետիկա	5	25	50
Գիտություն և կրթություն	5	25	50
Տրանսպորտ, առևտուր և ծառայություն	5	15	30

Նման չափորոշիչների կիրառումը բխել է այն ժամանակվա ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերի և բնագավառների զարգացման մակարդակից և ընդհանուր առմամբ երկրում ձևավորված տնտեսական իրավիճակից:

Փոքր և միջին ձեռնարկատիրության դերի ըմբռնումը պահանջում է ունենալ պարզ պատկերացում այն մասին, թե այդ ձեռնարկատիրությունը ինչպիսի տեղ է զբաղեցնում ազգային տնտեսության մեջ և ինչպիսին են դրա տարբերակիչ առանձնահատկությունները:

Փոքր և միջին ձեռնարկատիրության՝ որպես ժամանակակից տնտեսության կարևոր բաղկացուցիչ մասի, զարգացումը հսկայական նշանակություն ունի ողջ տնտեսական դաշտի համար: ՓՄՁ սուբյեկտների ոչ մեծ չափերը, դրանց

[5] Տե՛ս «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 05.12.2000:

տեխնոլոգիական, կառավարչական ճկունությունը թույլ են տալիս ժամանակին արձագանքել շուկայի փոփոխություններին: ՓՄՁ բարձր հարմարվողականությունը և դրա կողմից երկրի ներքին շուկայի գրեթե բոլոր ոլորտների զանգվածային ընդգրկումն ապահովում են տնտեսության զարգացման կայունությունը: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը նպաստում է տնտեսության բոլոր ճյուղերի և ոլորտների աշխուժացմանն ու «վերակենդանացմանը», այդ թվում՝ խոշոր ձեռնարկությունների հնարավորությունների ընդլայնմանը՝ իր վրա վերցնելով խոշոր ձեռնարկությունների որոշ արտադրական փուլեր (իրականացնելով խոշոր ձեռնարկությունների պատվերները): ՓՄՁ զարգացումը՝ պետական համակարգված տարածաշրջանային ծրագրերի իրականացումով նպաստում է մարզերի տնտեսական զարգացմանը, նրանց միջև գոյություն ունեցող անհամամասնությունների հաղթահարմանը, տարածաշրջանների միջև տնտեսական կոոպերացիայի զարգացմանը: Փոքր և միջին ձեռնարկատիրությունն ավելացնում է պետական բյուջե մուտքերի ծավալը, խթանում է գիտատեխնիկական առաջընթացը, իրականացնում է տնտեսության համար այլ կարևոր գործառնություններ:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման տնտեսական նպատակներն են[6].

- ստվերային տնտեսության կրճատումը,
- արտադրության ծավալների զգալի աճը,
- ձեռնարկությունների մրցակցության բարձրացումը,
- ֆինանսական միջոցների հոսքը արտադրական ոլորտ,
- հայրենական ապրանքների որակի բարձրացումը,
- մարզերի տնտեսական զարգացումը,
- արդյունաբերական հզորությունների վերագործարկումը և վերակառուցումը,
- ներմուծման կրճատումը, արտահանման ծավալների աճը,
- ներքին նյութատեխնիկական պաշարների առավելագույնս օգտագործումը:

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը անմիջական ազդեցություն ունի նաև երկրում տիրող սոցիալական վիճակի վրա: Փոքր և միջին ձեռնարկությունների թվաքանակի աճը հնարավորություն է ընձեռում ստեղծելու զգալի թվով նոր աշխատատեղեր՝ կրճատելով գործազրկության մակարդակը: ՓՄՁ զարգացումը անմիջականորեն ազդում է բնակչության լայն խավերի դրամական եկամուտների աճի վրա և բարձրացնում նրանց վճարունակությունը: Այն առավել լայն հնարավորություն է ստեղծում անհատի ունակությունների դրսևորման և դրա համար հավասար պայմանների ստեղծման համար, ինչը հանգեցնում է սոցիալական արդարության ամրապնդմանը:

Որքան էլ զարմանալի է, ՓՄՁ-ն որոշակի իմաստով լուծում է նաև գենդերային հիմնախնդիրներ: Մի կողմից, ինչպես հայտնի է, խոշոր ձեռնարկությունների համար կանացի աշխատուժն այնքան էլ գրավիչ չէ: Չնայած շատ ոլորտներում կանանց մասնագիտական պատրաստվածության միջին մակարդակն ավելի բարձր է, սակայն նրանք միշտ չէ, որ կարողանում են համադրել աշխատանքն ու ընտանեկան պարտականությունները գործատուի համար արդյունավետ ռեժիմով:

[6] Տե՛ս Շմավոնյան Գ.,Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական կարգավորման առանցքային հիմնախնդրի շուրջ" Սոցիալ-Տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր) " Եր., «Գիտություն», 2009, էջ 24:

Մյուս կողմից՝ հաճախ, նույն պատճառներով, հենց կանանց չի բավարարում աշխատանքը խոշոր ձեռնարկությունում: Փոքր գործարարությունը իր աշխատանքի ճկուն գրաֆիկով, տանն աշխատելու հնարավորությամբ և մի շարք այլ առավելություններով, հնարավորություն է տալիս բարձրացնել կանանց զբաղվածության մակարդակը, իսկ նրանցից շատերն էլ ստեղծում են իրենց սեփական փոքր ձեռնարկությունները:

Այսպիսով, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման սոցիալական նպատակներն են՝

- ❖ նոր աշխատատեղերի ստեղծումը,
- ❖ բնակչության արտահոսքի նվազումը և ներհոսքի խթանումը,
- ❖ հասարակության մեջ սոցիալական արդարության ամրապնդումը,
- ❖ բնակչության եկամուտների աճը և վճարունակության բարձրացումը:

ՓՄՁ-ին բնորոշ այս բոլոր գծերն առավելություններ են, որոնք բարձրացնում են ներքին շուկայի կայունության մակարդակը, սակայն որոշակի պայմանների առկայության դեպքում դրանք վեր են ածվում թերությունների՝ կասեցնելով ՓՄՁ զարգացումը: Մի կողմից գործունեության պայմանների փոփոխություններին ՓՄՁ արագ արձագանքումը այն դարձնում է առավել շարժունակ և հարմարվող, իսկ մյուս կողմից կախվածության մեջ է դնում շուկայի կառուցվածքից, արտաքին սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններից: Հարաբերական ոչ մեծ կապիտալը նեղացնում է արտադրության սահմանները, սահմանափակում է լրացուցիչ պաշարների (գիտատեխնիկական, ֆինանսական, արտադրական, աշխատանքային և այլն) ներգրավման հնարավորությունները, իսկ մյուս կողմից, արտադրության սահմանափակ մասշտաբները և զբաղվածների ոչ մեծ թվաքանակը պայմանավորում են ձեռնարկության կառավարման պարզությունն ու արդյունավետությունը: Այսպիսով, փոքր ձեռնարկատիրության առավելություններն ու թերությունները հարաբերական են և մեծապես կախված են շուկայի և ճյուղի ընդհանուր կառուցվածքից: Այնուամենայնիվ, որպես ՓՄՁ բնորոշ գծեր և հիմնական առավելություններ կարող ենք ներկայացնել հետևյալները՝

1. ՓՄՁ սուբյեկտները առավել փոքր ներդրումների հաշվին և կարճ ժամանակահատվածում ապահովում են զգալի թվով նոր աշխատատեղեր,
2. ՓՄՁ-ներն առավել արդյունավետությամբ են օգտագործում տեղական հանքահումքային ռեսուրսները և նվազեցնում երկրի տնտեսության կախվածությունը ներմուծումից,
3. ՓՄՁ-ներում համեմատաբար արագ և փոքր ծախսերով են ներդրվում նոր տեխնոլոգիաներն ու նորարարությունները,
4. ՓՄՁ-ների զարգացումը տարածաշրջաններում էապես նպաստում է տվյալ երկրում նպատակային տարածաշրջանային քաղաքականության իրականացմանը,
5. ՓՄՁ-ներում արտադրվող ապրանքատեսակները մրցունակության մեջ են մտնում ներմուծվող ապրանքատեսակների հետ՝ դրանք փոխարինելով տեղական ապրանքատեսակներով,
6. ՓՄՁ-ների զարգացումը ժամանակակից հասարակության հիմքը կազմող միջին խավի ձևավորման և կայացման գրավականն է,

7. ՓՄՁ-ները, շնորհիվ իրենց ճկունության, շատ ավելի արագ են հարմարվում շուկայի պահանջներին՝ յուրացնելով նոր ապրանքատեսակների արտադրությունը և սպասարկման արդիական ձևերը,
8. ՓՄՁ-ները, ելնելով իրենց ռազմավարական կարևորությունից և հետագա զարգացման հնարավորություններից ու առանձնահատկություններից, նպաստում են տնտեսության բոլոր ճյուղերի և ոլորտների աշխուժացմանն ու վերակենդանացմանը, այդ թվում՝ խոշոր ձեռնարկությունների հնարավորությունների ընդլայնմանը:

Եզրակացություն: Հոդվածում հիմնավորվում է, որ շուկայական հարաբերությունների ձևավորման և հետագա զարգացման փուլերում տնտեսության ցանկացած ոլորտում կարևորագույն դեր և նշանակություն է ձեռք բերում ձեռնարկատիրական գործունեությունը, նրա կազմակերպման ձևն ու մակարդակը: Ընդհանուր առմամբ փոքր և միջին ձեռնարկատիրության առանձնացումը պայմանական բնույթ է կրում և չի ենթարկվում պարզ բնորոշման: Պարզաբանվում է, որ քանակական տարբերակման հիմնական առավելությունը նրա օգտագործման հարմարավետությունն է, սակայն այս կամ այն ցուցանիշների և դրանց սահմանների չափորոշման հարցում տարբերակվածությունը դժվարացնում է դրանց օգտագործումը համեմատական վերլուծության ժամանակ:

Օգտագործված գրականության ցանկ

1. “Fundamentals of Financial Management”by James C. Van Horne, John M. Wachowicz, Paperback, Prentice Hall (November 2008).
2. «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, 05.12.2000:
3. Бусыгин А.В., “Предпринимательство: основной курс”, М., ИНФРА-М, 2003.
4. Динкин А., Стерлин А., “Предпринимательство в конце XX века”, Институт мировой экономики и международных отношений (Российская академия наук), М, 1992г.
5. Հարությունյան Դ., «Գործարարության ծավալման տնտեսական խթանները Հայաստանի Հանրապետությունում», Եր., 2007.
6. Շմավոնյան Գ., Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական կարգավորման առանցքային հիմնախնդրի շուրջ: Սոցիալ-Տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր): Եր., «Գիտություն», 2009.

Артур Варданян
Студент 4-ого курса кафедры Управления
Международного университета Евразия

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ МАЛЫХ И СРЕДНИХ ПРЕДПРИЯТИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Малые и средние предприятия играют основополагающую роль в стабилизации экономики страны и формировании многих бизнес-культур. Будучи более гибкими и адаптируемыми, они очень быстро воспринимают и используют новые технологии и форматы.

МСП создают большой рынок труда и предлагают рабочие места для профессионалов и быстро заполняют те ниши в бизнесе, которые были бы дорогостоящими или невыгодными для крупных организаций.

МСП также характеризуются более теплым и дружелюбным отношением к сотрудникам, что приводит к гораздо более тесным отношениям между руководством и членами команды:

Ключевые слова: предпринимательская деятельность, малые и средние предприятия (МСП), индикатор, качественные индикаторы, субъекты МСП.

Artur Vardanyan
BA 4th year student, Department of Management, Eurasia International University

SMALL AND MEDIUM ENTERPRISES DEVELOPMENT PERSPECTIVES IN ARMENIA

Small and medium-sized enterprises have a fundamental role in stabilizing the country's economy and shaping many business cultures. Being more flexible and adaptable, they perceive and use new technologies and formats very quickly, as a result of which they have more in-depth knowledge of global trends.

SMEs create a large labor market and offer diverse jobs, often for professionals practicing variety of different skills and knowledge, and rapidly fill in gaps in business that would be costly or not as profitable for large organizations.

SMEs are also characterized by a more warm and friendly attitude towards employees, which results in much closer relationships between management and team members, which, in its turn, contributes to a more caring attitude towards the product or service developed by that SME.

Given the increase in the number of SMEs in Armenia and the payments made by them to the state budget, one can give a positive opinion about the stable basis for SME development in Armenia.

Key words: entrepreneurial activity, small and medium enterprises (SMEs), indicator, qualitative indicators, actors of SMEs.